

**ԵՐԱԻԾԱԿԱՆ ՀԱՅ ՊԱՐՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒԵՌԻԹՅԱՆ
ԴԱՍՏԻՐԱԿՅԱԿԱՆ ՈՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ***

Ողջականական Աղաջանյան

Դաստիրակությունը միշտ էլ նշանակել է փոփոխություն: Եթե փոփոխությունների կարիքը չկհներ, ապա դաստիրակության կարիքն էլ չեր լինի:

Լ. Ս. Վիգուտսկի

Բանալի բառեր՝ Երգիծական, դաստիրակություն, պարբերական, հայկական, փոփոխություն, նպատակ, դիպուկ խոսք

Հայ պարբերականներն, այդ թվում նաև Երգիծանքին նվիրվածները միշտ էլ նախատեսվել են ընթերցողների լայն շրջանակների համար: Երգիծանքին նվիրված հայ պարբերականները ձգտել են բացահայտել հասարակական լյանքի դրուտների թերությունները, Երգիծական խոսք ու ծաղրանկարներ նվիրել դրանց նկարագրություններին ու վերացնան ուղիներին: Կենդանի կապեր հաստատելով ընթերցողների լայն շրջանակների հետ պարբերականները ձգտել են նրանց գործունեությունն ուղղել դեպի դրականը և բացասականը վերացնելու: Դժվար չէ նկատել, որ Երգիծանքին նվիրված հայ պարբերականների համար կարևոր խնդիր է համարվել ընթերցողների գիտակցությունում փոփոխություններ առաջ բերելը, որը բխում է դաստիրակության հությունից: Այդ հիմնահարցը լուծելու նպատակով Երգիծանքին նվիրված հայ պարբերականները հաղորդել են համակարգված Երգիծական կծու ու դիպուկ, միաժամանակ արդարացի խոսք և բովանդակալից ծաղրանկարներ: Հրապարակված նյութերը բովանդակել են ընթերցողների հոգեբանական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու, ինքնադաստիրակությամբ զբաղվելու, բնավորության որոշակի գծեր արմատապես փոփոխելու, հիմնահարցերի վերաբերյալ նոր մոտեցումներ ցուցաբերելու պահանջներ, որոնք ամփակելիորեն կապված են դաստիրակության խնդիրների ու նպատակների հետ:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականները հրապարակել են մտքեր, որոնք ունեն Երգիծական բովանդակություններ.

- Ով որ գիտի, թե որն է բարին ու լավագույնը և սակայն գործում է հակառակը, նա մի չարագործ է:
- Փառքը փախչում է նրանցից, ովքեր աշխատում են այն ձեռք բերել ստոր միջոցներով:
- Ոչ միայն վաստ բան անելն է մեղք, այլև վաստ բան մտածելը:
- Միայն հարթեցող մարդն է ճշմարտություն ասում: Ես չեմ սիրում ստությունը, դրա համար էլ միշտ խնում եմ:
- Ուսուցչներից մեկը սովորություն ուներ Գ տարի փոխարեն Ք տարն էր օգտագործում: Նա աշակերտներից մեկին ասում է.

Քիրող բեր (Գիրող բեր):

Ես մի քիր եմ ունեցել, որն ամուսնացել գնացել է:

* Հոդվածն ընդունվել 15.02.17

Հոդվածը տպագրության է Երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

- Մեկն ասում է, որ ինքը գիտի, որ ինքը ոչինչ չի հմանում:
Ես Էլ այդ գիտեմ, պատասխանում է զրուցակիցը:
- Սայիտակը սև ընդունել՝ իրականությունը բացասական կողմերով ներկայացնել:
- Խավարդ չպետք է հաղթի լույսին:
- Շողոքորդն անտեսում է ազնիվ ու վսեմ կյանքը:
- Չարություն բողոքելը շատ վնասակար գործ է:
- Դաստիարակությունը փոփոխությունն է:
- Անհրաժեշտ է խուսափել ծիծաղի առարկա դառնալուց:
- Ընթերցանությունը թերությունը վերացնելու գործոն է:
- Կեղծավորությունը ստոր արվեստ է:
- Սսորությունը դժողը է:
- Ճշմարիտ ուղուց շեղվողներին պետք է խայթել որպես սուր:
- Լավ ապրելու հաճար պետք է հիշել անցյալը:
- Անցյալն անդարձ է, պետք է հոգալ ապագայի մասին:
- Չար մարդիք ունեն միայն մեկ զենք՝ կեղծել:
- Օրենքը, եթե օրենք չլիներ, ամեն օր չէր փոփոխվի:
- Չափութ է ծգուել մեծ գումարների, որ եղածն էլ չկորցնես;
- Եթե կաշառակեր ես, դիմակը քեզ չի օգնի:
- Ուսու՞ն ստացիր, տգես մի՞ մնա:
- Սսորությունը դժողը է:

Երգիծանքին նվիրված պարբերականների էջերում որակ են կազմում նշված բնույթի բազում արտահայտություններ: Պարբերականների էջերում քիչ չեն ընթերցողների շնորհակալական և երգիծանքին նվիրված թղթակցությունները: Խմբագործությունները քիչ դեպքերում չեն, որ բավարարել են ընթերցողների պահանջները: Այսպես, օրինակ, «Կարկուտ[1]» պարբերականը, փոխարինելով «Հի-Հի-Հի[2]»-ին գրել է, որ ընդառաջելով ընթերցողներին պարբերականի ծավալը չորս էջից դարձնում ենք ուրք, անփոփող թողնելով գինը:

Ենտոք է ընդգծել, որ նման դեպքերը եզակի չեն եղել: Քիչ չեն նաև դեպքերը, որ պարբերականները հրատարակել են ընթերցողների դիպուկ ու երգիծական խոսքերը, կազմակերպել են մրցույթներ, կատարել են պարզևատրություններ: Այս բոլորը վկայում են, որ երգիծական հայ պարբերականներն ունեցել են ընթերցողների լայն շրջանակներ: Պարզ է, որ ընթերցողները չեն կարող նաև ազդեցություն չկրեին պարբերականների նյութերից և չունենային դեպի դրականն ավելի ուղղվելու հնարավորություններ:

Երգիծանքին նվիրված պարբերականների էջերում որակ են կազմում շատ դրույթներ, որոնք ուղղված են դեպի ապագան, բարոյական խրատները, դեպի ընդորինակման ենթակա որակները, կյանքն առաջադիմական ուղղով տանելուն, վասին կատառմամբ քննադատական մոտեցում ցուցաբերելուն, բարին վասից տարբերելուն, վասի որակներից հրաժարվելուն, մտածելուն, փոխադարձ օգնություն, լսելու հմտություն ծեռք բերելուն, երգիծական խոսքի իմաստն ընկալելուն, լավատես լինելուն, վասից հրաժարվելու կամք ունենալուն, շրջապատում ծիծաղի առարկա չդառնալուն, աշխատանքը սիրելուն, ընկերասեր լինելուն և նման շատ որակներ ունենալուն: Դժվար չէ նկատել, որ երգիծանքին նվիրված հայ պարբերականներն իրենց ուշադրությունից դուրս չեն թողել դաստիարակության իմնահարցերը: Ոչ քիչ թվով երգիծական հայ պարբերականներ ընդգծել են թերություններն ընթերցանության միջոցով վերացնելուն նպաստելու անհրաժեշտությունը: Պարբերականներն ամենատարբեր առիթնե-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րով են ընդգծել, որ ծաղրական խոսքը կառուցվում է, ծաղրամկարները հրատարակվում են, որ օգնեն ընթերցողներին խուսափելու նման պայմաններում գտնվելու հնարավորություններից: Մենք գտնում ենք, որ այս բոլորը դաստիարակչական գործուներ են և անհրաժեշտ է պահել, որ երգիծանքին նվիրված հայ պարբերականների նպատակներն ու բովանդակությունները պահպել են ընթերցողների գործունեությանը դրական ուղղություն տալու շուրջը և պետք է ընդգծել, որ դրանք հասել են որոշակի հաջողությունների, որոնց համար վկաներ են ընթերցողների վերաբերմունքը երգիծանքին նվիրված հայ պարբերականների նկատմամբ: Պարբերականների էջերում որակ են կազմում ընթերցողների շնորհակալական խոսքերը, թղթակցությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը:

Դաստիարակչական առումով երգիծական խոսքն ունեցել է մեկ մեծ առավելություն, այն կրել է ոչ թե ընդհանուր, այլ կոնկրետ ուղղություն և ընդորինակելու համար էլ ունեցել է լայն հնարավորություններ: Մեր ընդհանուր եզրակացնությունն մեկն է՝ երգիծական խոսքն ու հումորը դաստիարակությամ հզոր գործուներ են և դրանց ոչ թե պետք է վախենալ, այլ պետք է դրանք դարձնել կյանքի լուսատու ուղեցույցներ:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականների գործունեության դաստիարակչական ուղղվածության հիմնավորման ակնառու փաստեր պետք է համարել նրանցում հրատարակչական ծաղրանկարների բովանդակությունները:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականների էջերում որակ են կազմում բարոյական գիտակցություն, վարքի ու զգացմունքներին նվիրված նյութերը, բարոյական խրատները և երգիծական խոսքը:

Պարբերականների էջերում քիչ չեն խոսվել համեստության, արդարության, ազնվայրյան, ճշմարտության, անկենծության, մաքրու խնձի, ուրիշների հետ բարեկամության, հայրենասիրության, տարբեր բնույթի չարիքների, առաքինությունների, համբերության, լսել իմանալու, անձնական աշխատանքի, պարապության և նման շատ ու շատ որակներ ունենալու մասին: Պարբերականները բավարար պայքար են ծավալել նաև բացասական որակներ ծևավորելու դեմ պայքարելու հիմնահարցին: Դրական է, որ պարբերականները տարբեր առողջներով են ընդգծել, որ բնավորության բացասական գծերը մշակվում են կյանքի պայմաններում և դրանցից հրաժարվելը կամքի ու համառության առկայության դեպքում լինվին հաղթահարելի են: Պարբերականներն ամենատարբեր առիքներով են ընդգծել առաքինի գործեր ու արարքներ կատարելը վարժվելու արդյունք լինելու գաղափարը: Պարբերականների էջերում պատշաճ տեղ է հատկացվել դժվարություններ հաղթահարելու սովորություն ունենալուն և դրանցից չկախենալուն: Աշխատանքները բարեկավելու հուսալի միջոցը հայ երգիծական պարբերականները համարել են նպատակային շփումը: Պարբերականներն ընդգծել են շատ կարևոր գաղափար ևս՝ ուրիշների հետ պետք է վարվել այնպես, ինչպես կցանկանաս, որ ուրիշները վարվեն քեզ հետ: Ընգծվել են, որ բարոյական նորմերը բնածին չեն, դաստիարակության ողբարությունը ընտանիքների դերն ուշադրության արժանի են, հնագանությունը պետք է ունենա սահմաններ, ստորությունը դժոխք է, օստարամությունը ոչ մի օգնու չի բերում և նման դրույթների դերը:

Հիմնավորված պետք է համարել երգիծանքին նվիրված հայ պարբերականների զգալի թվի առկայությունը՝ պարբերականների ընդհանուր թվի շուրջ յոթ տոկոսը, ինչպես նաև այդ բնագավառում անգնահատելի ավամու թողած մտավորականների մեծ բանակի գոյությունը: Զի կարելի ամսեսել այդ պարբերականների գործունեության ընդհանուր ու վեհ նպատակը՝ ներգործել ընթերցողների վրա, դաստիարակչական առումով կատարել օգտակար ու մնայուն աշխատանք: Անհրաժեշտ է ընդգծել, որ երգիծանքին նվիրված

ՄԵՐՈՐԴ ՄԱՇՏՈՑ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հայ պարբերականներն անմնացորդ նվիրվել են դաստիարակության գործընթացին և կատարել են մնայուն գործնեռություն: Մեր ծեռքի տակ եղած պարբերականների բովանդակությունները խիստ բավարար հիմքեր են տալիս, որ երգիծանքին նվիրված հայ պարբերականները հանդես են եկել որպես դաստիարակության գործններ և այդ բնագավառում, անկասկած, թողել են մնայուն ավանդ՝ նպաստել են հայեցի դաստիարակության, հային հայ մնայու, ընթերցողներին դրական դրակմերով զիմելու, թերություններն արմատախիլ անելու վեհ գաղափարների արմատավորմանը: Երգիծանքին նվիրված հայ պարբերականներն ունեցել են նաև ընդարձակ աշխարհագրություն, ընթերցողների լայն շրջանակ: Առկա է խմբագրությունների ու ընթերցողների կապերի տեսակներ՝ հարց ու պատասխաններ, մրցույթներ, թղթակցությունների ու կարծիքների հրապարակում և այլն:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականների գործության, գործունեության, դրանց շուրջը համախմբված մտավորականների վերաբերյալ ուսումնասիրություն կատարելը հիմնավորված է և ունի գիտագրոծնական նշանակություն ու արժեք: Մեր գրադարաններում եղած այդ բնույթի պարբերականների նյութերը բավարար են, որ ծառավորվի ընդհանուր պատկերացում դրանց գործունեության մասին:

«Աշխատանքի մոծակ[3]», «Աքլոր[4]», «Խարազան[5]», «Խիկար[6]», «Կատակ[7]», «Հի-Հի-Հի» և նման շատ երգիծական պարբերականների իրենց նպատակների համար հասուլ նպատակներ չեն արձանագրել, բայց դրանց բովանդակությունների առանձին համարների առկայությունը վկայում է, որ դրանց գործունեությունը ծառայել է դաստիարակության վեհ գաղափարին: Փաստ է, որ դրանց երգիծական խոսքն ուղղված է հասարակական կյանքի խորհ բարքերն ուղղելուն և ընթերցողներին ճշմարիտ ուղի ցուց տալուն: Բարեբախտաբար այդպիսի պարբերականների թիվը շատ մեծ չէ: Գրադարաններում եղած առանձին համարների բովանդակությունները վկայում են մեր ենթադրության ճշմարիտ լինելու մասին: Այսպես, օրինակ, միթե քիչ բան է հուշում այն, որ «Փող Առավոտյան» պարբերականի տնօրեն-խմբագիրը եղել է հայ մեծ երգիծարան Հակոբ Պարույնանը: Այդ պարբերականն անասկած զգալի տեղ է տվել խմբագրի երգիծական խոսքին: Նման փաստերը եզակի չեն :

Երգիծանքին նվիրված հայ պարբերականների մասին ընդհանուր պատերացումներ են տալիս նրանց անվանումները՝ անմանու, ապտակ, ավել, հայելի, ծիծաղ, մեղա, սակիրիշ և այլն: Պարբերականների ընդհանուր նպատակների մասին են խոսում դրանց առաջին տարիների առաջին համարների խմբագրականներում օգտագործված արտահայտությունները՝ «Խայթելու ենք, որպես սուր», «Անընդհատ տղգալու ենք», «Ասելու ենք ուղիղ ծանապարհից շեղումներ հրահրողներին», «Նպաստելու ենք աննամուսությունները գոլորշիացնելուն», «Հարվածելու ենք հայ ժողովրդի ներքին ու արտաքին թշնամիներին», «Նպաստելու ենք ապազայի ուղին լուսավոր դարձնելուն», Ծաղրելու ենք առաջընթացի համար խոշնորտներ ստեղծողներին», «Սակրելու ենք ցեցերը» և այլն: Այսպիսի արտահայտությունները շատ ու շատ են և բոլորն էլ պատշում են ընթերցողներին դաստիարակելու նպատակի շուրջը:

Երգիծանքին նվիրվել են մեծ թվով պարբերականներ, առաջին 150 տարիներին (1794-1944)[8] հայ իրականության մեջ լույս տեսած ավելի քան երկու հազար պարբերականների շուրջ յոթ տոկոսի ճակատներին գրվել է երգիծական տերմինը: Ընդհանուր եղակացությունը մեկն է՝ երգիծանքին նվիրված պարբերականների գործնեռությունը պատշվել է ընթերցողների դաստիարակությանը նպաստելու վեհ նպատակին և պետք է արձանագրել, որ պարբերականները պատվով են ծառայել իրենց վեհ նպատակին:

Երգիծանքին նվիրված հայ պարբերականներն ունեցել են ընդարձակ աշխարհագ-

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րություն, իրենց շուրջը համախմբված մտավորականների, ինչպես նաև ընթերցողների մեջ բանակ: Այդ բնույթի պարբերականներն ընդգծված տեղ են հատկացրել Երգիծական խոսքին, բարոյական խրատներին, գործնական երաշխավորություններին, նպատակային համեմատություններին, ծաղրանկարներին, բովանդակալից վկայակոչումներին, զգարձություններին և այլն: Երգիծանքին նվիրված հայ պարբերականների գործներության խոսուն վկաներ պետք է հանարել դրանց անվանումների առկայությունը՝ ցախավել, ավել, գուռնա, հայելի, ապտակ, խարտոց, մեղու, մոծակ, սակիրիչ և այլն: Այդ բնույթի պարբերականների գործներության համար ուղեցույց է հանդիսացել արդարությունն ու դժվարություններից չվախենալը:

Երգիծական պարբերականները կատարել են դաստիարակության դպրոց լինելու դեր, ընդգծել են կարևոր գաղափար՝ առանց ընթերցողների ակտիվ օժանդակության երգիծական պարբերականների հաջողությունները կիմնեին չնշին: Արդար երգիծական խոսքն այն պաշտոնն է, որն ընթերցողներին առաջնորդում է դեպի բարին ու գեղեցիկը, ճշմարտությունն ու ազատ խոսելու գաղափարը: Այն սերմանում է ազատ կարծիք արտահայտելու գաղափարը (մեծ Կոպերնիկոսն ու շատ շատերը չեն հավերժանա, եթե չունենային ազատ կարծիք): Ակգրունք ու ազատ կարծիք չունեցողները չեն կարող խոսել ժողովրդի սրտից: Պարբերականների համար պատգամ է եղել ուշագրավ դրույթ՝ իրենց հրապարակումները պատգամներ չեն, այլ մտածելու ու ուղի ընտրելու փարուներ են:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Կարկուտ», Վան, 1910-1911թթ.
2. «Հի-Հի-Հի», Կ. Պոլիս 1910.
3. «Աշխատանքի մոծակ», Սալոնիկ, 1926թ.
4. «Աքլոր», Լիոն, 1936-1937թթ.
5. «Խարազան», Փարիզ, 1920.
6. «Խիկար», Կ.Պոլիս, Ալեքսանդրիա, 1884-1888թթ.
7. «Կատակ», Վան, 1897.
8. Առաջին հայ պարբերականը հրապարակվել է 1794:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Երգիծական հայ պարբերականների գործումներության
դաստիարակչական ուղղվածությունը
Ոռօք Աղաջանյան

Երգիծանքին նվիրված հայ պարբերականների գործներությունը դաստիարակության հզոր գործոն է, և այդ գործներության ուսումնասիրությունն առավել ամբողջական է դարձնում հայ մանկավարժական մտքի պատմությունը: Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնելու Երգիծական հայ պարբերականների գործումներության դաստիարակչական ուղղվածությունը:

Դաստիարակության բնագավառում Երգիծական պարբերականների դրական փորձի ոչ քիչ թվով դրույթներ ցայսօր չեն կորցրել իրենց դերը, նշանակությունն ու թարմությունը և կարող են հաջողությամբ գտնել նոր գործնական կիրառություններ, որը բացահայտում է պատմականության սկզբունքին դիմելու նոր հնարավորություններ:

РЕЗЮМЕ

**Направленность на воспитание деятельности армянских
сатирических периодических изданий**

Роза Агаджанян

Ключевые слова: *сатирический, воспитание, периодический, изменение, армянский, точная речь, цель*

Деятельность армянских периодических изданий, посвященных сатире – это мощный инструмент воспитания, и изучение этой деятельности делает историю армянской педагогической мысли более целостной.

В этой статье сделана попытка представить воспитательное направление деятельности армянских сатирических периодических изданий.

Многие тезисы из положительных опытов в области воспитания сатирических периодических изданий до сих пор не потеряли свою роль, значение и свежесть и могут с успехом найти новые практические применения, что открывает новые возможности обращения к принципу историчности.

SUMMARY

Satirical Armenian newspapers educational orientation
Roza Aghadjanyan

Keywords: *satirical, educational, newspapers, Armenian, alteration, purpose, felicitous speech*

The activities of Armenian periodical publications dedicated to satire are educational powerful factor that makes the most complete study of the history of pedagogical thought. In this article we attempt to present the educational directions of Armenian satirical periodical publications activities.

A considerable number of positive provisions of satirical periodical publications in the field of educational have not lost their role, significance and freshness and can find new practical applications that reveal new opportunities to apply the principle of historicism.